ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ք. Աշտարակ　　　　　　　　　　2025թ. հուլիսի 1 -ին,　N 144 -Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ <<ՎԱՐԴԱԲԼՈՒՐԻ Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ>> ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 160-րդ հոդվածներով, 164-րդ հոդվածի 1-ին մասով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ հավելվածի 61-րդ կետը և ՀՀ Արագածոտնի մարզի <<Վարդաբլուրի Խ.Աբովյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող Հասմիկ Հակոբյանի 2025 թվականի հունիսի 30-ի դիմումը. ***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Վարդաբլուրի Խ.Աբովյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները կատարող Հասմիկ Հակոբյանին տրամադրել ամենամյա երկարացված արձակուրդ 2024-2025 թվականների ուսումնական տարվա համար 25 աշխատանքային օր տևողությամբ՝ 2025 թվականի հուլիսի 8-ից օգոստոսի 11-ը ներառյալ:
2. Հասմիկ Հակոբյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում <<Վարդաբլուրի Խ.Աբովյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել <<Վարդաբլուրի Խ.Աբովյանի անվան միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության ուսուցչուհի Մերի Խաչատրյանին:
3. Հասմիկ Հակոբյանին աշխատանքի մեջ համարել 2025 թվականի օգոստոսի 12-ից:

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 7/3/2025 17:36:18 GMT+4

Signed by: MOVSISYAN SERGEY 3309890457　　Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ